Կարգապահական գործ թիվ ԿԳ-18055

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 247-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/193-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱԳԻԿ ՊԱՊՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գագիկ Պապոյանին (արտոնագիր թիվ 1191) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ դատապարտյալ Մարտիկ Գերասիմի Բաղդասարյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Պալատ հայտնել է, որ իր նկատմամբ թիվ ԱՎԴ1/0081/01/12 քրեական գործով 08.04.2013 թվականին կայացված դատավճիռը բողոքարկելու համար ինքը դիմել էր փաստաբան Գագիկ Պապոյանին **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, իսկ 26.08.2016 թվականին իր կողմից փաստաբանին տրվել էր լիազորագիր՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան **(այսուհետ՝ ՄԻԵԴ)** բողոք ներկայացնելու նպատակով: 21.11.2016 թվականին Գագիկ Պապոյանն, իրեն տեղյակ չպահելով, փոստով ՄԻԵԴ է ուղարկում գրված դիմում-բողոքը, և Դիմողի հարցումներին, թե ինչ լուր կա ՄԻԵԴ-ից, փաստաբանը մշտապես տվել է պատասխան, թե լուր չկա, իսկ լինելու դեպքում՝ նա անպայման կիմանա: 2017 թվականի մայիս ամսվա կեսերին Դիմողն իմացել է, որ ՄԻԵԴ-ից 24.01.2017 թվականին ուղարկվել է թիվ 5679/17 պատասխանը, որն իր մեջ նշված թերություններով և առաջարկություններով պահանջում էր շտկել դրանք և 6 ամսվա ընթացքում դիմել ՄԻԵԴ: Ի պատասխան Դիմողի ահազանգին՝ փաստաբանը պատասխանել է, որ մոռացել է՝ գցելով դարակը, չի հիշել, որ պետք է պատասխանի: Դիմողը նշել է, որ 16.11.2017 թվականին ստացել են ՄԻԵԴ-ի հաջորդ՝ թիվ 57772/17 պատասխանը, որի համաձայն 02.08.2017 թվականին ուղարկված դիմում բողոքն անընդունելի էր՝ ժամկետի ուշացման պատճառով: Արդյունքում Գագիկ Պապոյանը, իմանալով, որ

վերջնաժամկետը լրանում է 24.07.2017 թվականին, բողոքն ուղարկել էր 02.08.2017 թվականին՝ ուշացնելով այն 9 օր և դարձնելով անընդունելի:

Դիմողը նշել է, որ ինքը ծառայություններ մատուցելու համար փաստաբանին վճարել է 215.000 ՀՀ դրամ և խնդրել է, որպեսզի փոխհատուցվի փաստաբանի կողմից իրեն հասցված նյութական և բարոյական վնասը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 12.03.2018թ. թիվ 114-Ա/ԿԳ-18055 որոշմամբ փաստաբան Գագիկ Պապոյանի (արտոնագիր թիվ 1191) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

15.03.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման, ինչպես նաև Խորհրդում քննության ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

19.02.2018 թվականին Պալատ է մուտքագրվել փաստաբան Գագիկ Պապոյանի բացատրությունը, որով նշել է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների Հիվանդանոց» ՔԿՀ-ում պատիժը կրող Մարտիկ Բաղդասարյանին իրավաբանական օգնությունը ցույց է տվել նրա և իր միջև կնքած համապատասխան պայմանագրի հիման վրա, որով նախատեսված վճարումները վերջինս կատարել է բանկային փոխանցման միջոցով, որի /փոխանցած գումարների/ մեծ մասի հաշվին կատարվել են նաև քրեական գործի նյութերից պատճենների և դատական նիստերի արձանագրությունների էլեկտրոնային կրիչների ստացման համար սահմանված պետական տուրքերի, մատուցված փոստային, տրանսպորտային և համակարգչային ծառայությունների վճարները, քանի որ նրա վերաբերյալ քրեական գործը քննվել և արխիվացվել էր Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում դռնփակ դատական նիստով, ինչի պատճառով գործի նյութերին ծանոթանալու թույլտվություն ստանալու համար համապատասխան միջնորդություն է ներկայացվել դատարան, որի բավարարումից հետո միայն կարողացել է ծանոթանալ դրանց: Ինչ վերաբերվում է Մ. Բաղդասարյանի ՄԻԵԴ-ին բողոքի /գանգատի/ պատրաստման, առաքման և կրկին ներկայացման հանգամանքների վերաբերյալ Պալատին հասցեագրած դիմումում նշված հանգամանքներին, ապա հայտնել է, որ վերջինս խեղաթյուրել է փաստական հանագամանքերը և դրանք ներկայացրել իրեն հարմար տարբերակով: Իրականում Մ. Բաղդասարյանի անունից պատրաստված բողոքը «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով Ստրասբուրգ էր

ուղարկվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասիՀՀ վճռաբեկ դատարանի որոշումն ստանալուց հետո 6 ամսյա ժամկետում, իսկ ՄԻԵԴ-Ն այն վերադարձրել էր ոչ թե ժամկետն անցած լինելու հիմքով, այլ դրա տեքստը ՄԻԵԴ-ի բլանկի /ձևաթղթի/ էջերում դրա բովանդակության փոխկապակցված ու հասկանալի չլինելու պատճառով, որում նշվել էր նաև, որ բողոքի ներկայացման ժամկետին ՄԻԵԴ-ն կանդրադառնա շտկված բողոքը ստանալիս: Պատասխանողը նշել է նաև, որ բողոքը վերադարձնելու մասին ՄԻԵԴ-ի գրության մասին իրոք իրեն տեղյակ է պահել Մ. Բաղդասարյանը, որից հետո հարցում կատարելով փոստատարին, ուսումնասիրելով իր աշխատասենյակը և պահոցները, պարզել է, որ այն իր գործունեության վայրի փոստի բաժանմունք է ստացվել է ստացել 2017թ.-ի փետրվարի վերջերին կամ մարտի սկզբներին, որը փոստատարը ոչ թե անձամբ իրեն է հանձնել, այլ՝ թողել է աշխատավայրում, որը առանց բացելու, այլ փաստաթղթերի հետ միասին աննկատ հայտնվել է դարակում այլ փաստաթղթերի արանքում: Այս մասին հայտնել է Մ. Բաղդասարյանին և սեղմ ժամկետում շտկել բողոքը, այն համապատասխանեցնելով ՄԻԵԴ-ի գանգատի ձևաթղթի պահանջներին և կրկին ուղարկել է ՄԻԵԴ-ի հասցեով, ապա՝ որոշ ժամանակ անց ստացել բողոքը վարույթ չընդունելու մասին ՄԻԵԴ-ի պատասխանը և այն հանձնել նրան: Մ. Բաղդասարյանը ճիշտ չի ներկայցնում բողոքը չնդունելու մասին ՄԻԵԴ-ի գրության մեջ նշված հանգամանքները, քանի որ դրանում նշված չի եղել բողոքը ժամկետանց լինելու հիմքով չընդունելու մասին: Ընդհանրապես պատասխանը չի պարունակել բողոքը չընդունելու որևէ հիմք կամ հիմնավորում, այլ նշվել է, որ այն չի ընդունվել և որ այդ գործով այլևս որևէ գանգատ չներկայացվի, քանի որ այն կարժանանա նույն ճակատագրին:

Պատասխանողի կողմից նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին ներկայացվել է բացատրություն՝ որում նշվել է, որ կարգապահական վարույթ հստուցելու հարցը քննարկելու մասին որոշման մեջ նշված տեղեկատվությունն այն մասին, որ հւսմաձայն ՄԻԵԴ-ի 02.08.2017թ.-ի թիվ 57772/17 գրությամբ ՄԻԵԴ-ը բողոքն անընդունելի է համարվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու պատճառով, ինքը նման գրություն կամ որոշում չի ստացել, այլ՝ ստացել է 23.11.2017 որոշումը, որով բողոքն անընդունելի համարելու հիմնավորումներ չի պարունակում: Նա նշել է, որ իրեն գումարի վերադարձման պահանջ չի ներկայացվել, այլ՝ ներկայացվել է միայն պալատին ներկայացված Դիմումում, իսկ եթե ներկայացվեր, ապա՝ կողմերը կքննարկեին և ընդհանուր հայտարարի կգային:

Պատասխանողը ներկայացել է Խորհրդի նիստին և ըստ էության հաստատել բացատրություններում նշված հանգամանքները: Պատասխանողը ընդունել է, որ դիմումի սահմանված ձևով չի ներկայացրել և, որ երկրորդ անգամ խնդիր է արդեն առաջացել ժամկետի հետ կապված:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

12.05.2018թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն

Բալոյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն կարգապահական գործի նյութերով հիմնավորվել է, որ

- Փաստաբանի կողմից ուղարկված առաջին բողոքը ՄԻԵԴ կողմից չի ընդունվել դիմումի ձևաթղթում փաստերի շարադրանքի կապակցված չլինելու, Կոնվենցիայի ենթադրյալ խախտման և դրան վերաբերող փաստարկների շարադրանքը դիմումի ձևաթղթի՝ դրա համար նախատեսված էջում ներկայացված չլինելու պատճառաբանությամբ:
- Փաստաբանի կողմից ներկայացված երկրորդ բողոքը ՄԻԵԴ կողմից անընդունելի է համարվել սահմանված 6-ամսյա ժամկետից ուշ ներկայացված լինելու հիմքով:
- Փաստաբանի ներկայացրած բացատրություններից ակնհայտ է, որ ՄԻԵԴ բողոք ներկայացնելու ժամկետը խախտվել է ՄԻԵԴ-ի ծրարը «առանց բացելու, այլ փաստաթղթերի հետ միասին աննկատ փաստաբանի դարակում՝ այլ փաստաթղթերի արանքում» հայտնվելու պատճառաբանությամբ:
- Դիմողը փաստաբանին վճարել է ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու համար: Փաստաբանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում դիմողի գանգատը չի ներկայացվել այն դատարանի վարույթ չի ընդունվել և փաստաբանի ծառայություն մատուցելու համար Դիմողին վճարված գումարից որևէ մաս չի վերադարձվել:

Նախապատրաստողը գտել է, որ Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.8.5 ենթակետերով նախատեսված հատկանիշների խախտման փաստը հաստատվում է գործում առկա ապացույցներով:

15.05.2018թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի օգոստոսի 11-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Պատասխանողը թիվ ԱՎԴ1/0081/01/12 քրեական գործով Դիմողի անունից դիմում է ներկայացրել ՄԻԵԴ: ՄԻԵԴ դիմում ներկայացնելու նպատակով Դիմողը Պատասխանողի հաշվեհամարին է փոխանցել 215.000 ՀՀ դրամ:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված դիմումով և Պատասխանողի բացատրությամբ, ՄԻԵԴ կողմից ներկայացված գրությունների պատճեններով:

2. Գագիկ Պապոյանին ուղղված ՄԻԵԴ 24.01.2017թ. թիվ 5679/17 գրության համաձայն Գագիկ Պապոյանի կողմից չեն պահպանվել Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածով սահմանված պահանջները, հետևաբար դատարանի կողմից գանգատը չի քննվել:Մասնավորապես
   - դիմումի ձևաթղթում փաստերի շարադրանքը կապակցված չէ.
   - դիմումի ձևաղթում Կոնվենցիայի ենթադրյալ խախտման (խախտումների) շարադրանքը կապակցված չէ.-
   - Կոնվենցիայի ենթադրյալ խախտման (խախտումների) և դրան (դրանց) վերաբերող փաստարկների շարադրանքը չի ներկայացվել դիմումի ձևաթղթի համար նախատեսված էջում:

Նշված փաստը հաստատվում է 24.01.2017թ. թիվ 5679/17 գրության պատճենով:

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 02.08.2017 թվականի որոշման համաձայն դիմումը ճանաչվել է անընդունելի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ:

Նշված փաստը հաստատվում է 02.08.2017 թվականի գրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գագիկ Պապոյանի (արտոնագիր 1191, ստացված՝ 07.11.2011թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում չհաշված սույն կարգապահական վարույթը 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ):

Խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/131-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 6.2.1 ենթակետի պահանջների խախտման համար և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն: Կարգապահական տույժը մարվել է;

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գագիկ Պապոյանը ենթակա է պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետի հատկանիշներով փաստաբան Գագիկ Պապոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

7.1. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները...

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով նշված դրույթները Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Կարգապահական գործի նյութերով Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանողը Դիմողի իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է ներկայացրել ՄԻԵԴ, որը դատարանի կողմից մեկ անգամ ետ է վերադարձվել

Դատարանի կանոնակարգի 47-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելու համար, այնուհետև, փաստաբան Գագիկ Պապոյանի կողմից նշված թերությունները ուղղելուց հետո կրկին Դիմում է նրկայացվել ՄԻԵԴ, որը մերժվել է՝ վեցամսյա ժամկետը չպահպանելու համար:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանին հասցեագրված դիմումը կազմված է եղել էական խախտումներով, որի արդյունքը եղել է ի վնաս իր վստահորդի՝ Դիմողի կայացված որոշումը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատասխանողի կողմից ՄԻԵԴ դիմում ներկայացնելու ժամկետը խախտվել է *«ՄԻԵԴ-ի ծրարն առանց բացելու, այլ փաստաթղթերի հետ միասին աննկատ փաստաբանի դարակում՝ այլ փաստաթղթերի արանքում հայտնվելու պատճառաբանությամբ»:*

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նման վարքագիծը վկայում է այն մասին, որ նա պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի դրսևորել մասնագիտական բավարար ձեռնհասություն՝ կապված իրավունքի համապատասխան ոլորտի հետ, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գագիկ Պապոյանը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտում:

7.2. Կարգապահական տույժի ընտրությունը.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) տուգանք (…):

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է Գագիկ Պապոյանի նկատմամբ ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

7.3. Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ 1) վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի*

դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողը պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի դրսևորել մասնագիտական բավարար ձեռնհասություն՝ կապված իրավունքի համապատասխան ոլորտի հետ, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, ուստի և պետք է Դիմողին վերադարձնի հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել: Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատասխանողը հայտնել է, որ պատրաստ է վերադարձնել հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պատասխանողը չի խուսափում և պատրաստ է վերադարձնել հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել, Խորհուրդը գտնում է Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գագիկ Պապոյանին (արտոնագիր՝ 1191) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդված 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Գագիկ Պապոյանի (արտոնագիր՝ 1191) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Փաստաբան Գագիկ Պապոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետի մասով՝ կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/193-Ա
ք. Երևան